ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

14 օգոստոսի 2012թ. թիվ 31-Ա

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-18-Ը ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱԿԱՆ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ -728 հրամանագրի 16-րդ կետով, համաձայն Տավուշի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2012թ. հիմնական միջոցառումների պլանի

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ ԵՄ

1. 2012թ հոկտեմբերի 17-18-ը Տավուշի մարզում անցկացնել հրամանատարական շտաբային ուսումնավարժություն <<Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը սողանքների ժամանակ>> թեմայով:
2. ՈՒսումնավարժությանը մասնակից դարձնել
   1/ Տավուշի մարզպետարանին
   2/ Մարզային փրկարարական վարչությանը
   3/ ՔՊ մարզային ծառայություններին
   4/ Դիլիջան,Հաղարծին, Գոշ, Թեղուտ համայնքներին
   5/ 1-ին կանչի փրկարարական ուժերին
   6/ «Դիլիջանի հիվանդանոց» ՊՓԲԸ-ին
   7/ Հաղարծինի միջնակարգ դպրոցին
   8/ Դիլիջանի շին. վերանորոգման վարչությանը
   9/ «Հաղարծին» ՍՊԸ-ին

ՈՒսումնավարժությանը պատշաճ մակարդակով նախապատրաստվելու և անցկացնելու նպատակով

3. Մարզային փրկարարական վարչության պետին՝
   1/ Ճշտել և լրամշակել գործող պլանային փաստաթղթերը
   2/ Պատրաստ վիճակի բերել կառավարման կապի և ազդարարման համակարգերը
4. ՔՊ մարզային ծառայությունների պետերին՝ 10-օրյա ժամկետում
   1/ Ճշտել և լրամշակել գործող պլանային փաստաթղթերը
   2/ Կազմակերպել ծառայությունների համալրումը անձնակազմով, տեխնիկայով, գույքով, անցկացնել պարապմունքներ
5. Դիլիջան,Հաղարծին, Գոշ, Թեղուտ համայնքների ղեկավարներին

1/ Ճշտել և լրամշակել գործող պլանային փաստաթղթերը, տարահանման հանձնաժողովների կազմերը

2/ Կազմակերպել պարապմունքներ համայնքների ազգաբնակչության շրջանում

3/ Տեղերում ստուգել և ճշտել փրկարարական ուժերի հագեցվածությունը անձնակազմով, գույքով և տեխնիկայով

6. ՈՒսումնավարժությանը մասնակից կազմակերպությունների ղեկավարներին

1/ Պատրաստի վիճակի բերել առաջին կանչի ուժերը,միջոցներն ու տեխնիկան

2/ Անցկացնել ուսումնամեթոդական պարապմունքներ անձնակազմերի մասնակցությամբ

7. ՈՒսումնավարժության ընթացքում գործնականորեն իրականացնել

1/ Մարզի ՔՊ ղեկավար կազմի ազդարարում և հավաք

2/ Մասնակցող համայնքների ղեկավար կազմի ազդարարում և հավաք

8. ՈՒսումնավարժության ղեկավար նշանակել Մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ Վ.Հովսեփյանին

9. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2012թ. օգոստոսի 14
ք. Իջևան